

ԱՐՇԱԿ ՄԱՂՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅ ՌԵՍՊԱԲԼԻԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Քրիստոնեության աստվածաբանական դարերից ի վեր հայ ուխտավորներն այցելել են բոլոր նշանավոր սրբավայրերը՝ Երուսաղեմից ու Հռոմից մինչև Կոնստանդուպոլիսի Ս. Հակոբ վանքը: Այդ մասին տեղեկություններ պահպանել են թե՛ հայ, թե՛ օտար մատենագիրները: Ըստ որում, գրական գրեթե բոլոր տեսակների մեջ կարելի է գտնել դրանց արձագանքները՝ վարդերից ու վկայաբանություններից սկսած, վերջապես գեղարվեստական երկերով: Արկածայից ուղևորությունների վերաբերյալ տպավորություններ, խոհեր, նկարագրություններ կգտնենք՝ ներդրված պատմիչների երկերին, օրագրությունների մեջ: Քիչ չեն և չափածո գրատառերը այցելավայրի պատմության, ներկայի, ազգագրության, կենցաղի մասին (խաչատուր Թոխատցու «Պատմություն Վենետիկ թաղարին», Հակոբ րախ. Գրիգորենցի «Գովք Պրիթանիոյ»): Հատկապես ուշ միջնադարում գնալով շատախում են այս կարգի ուխտագնացություններին նվիրված բնագրերը, և միշտ չէ, որ հեղինակը ուխտավորներից է: Ծամախեցի երկու նղբայր՝ Սահակը և Ասլանը, մեծ նրկյուղածությամբ շքելու են Հայաստանի հյուսիս-արևելյան սրբավայրերում, այնուհետև գանկացել են գրավոր հիշատակ թողնել: Սրանց լսնդրաբերով 1661 թ. Թովմա վ. Վանադեզցին գրել է «Բան չարիեայ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց» բավական ծավալուն բերթվածը: Նա անձամբ չի եղել ներկայացվող սրբավայրերում և, բնականաբար, չէր կարող դրանք տեսանելի դարձնել ընթերցողին¹:

Այս տեսակետից հետաքրքրական է մեկ ուրիշ փաստ: 1724 թ. նոյեմբերի 20-ին հայ և խույն ուխտավորների վարձած նավը այնտեղից է ելնարկվում, և նրանք չեն արժանանում իրենց բաղձանքի իրագործմանը՝ Երուսաղեմը տեսնելու: Այդ մասին տեղեկանում ենք «Տաղ ՌՃՀԳ թվին Երուսաղեմայ ուխտատուքն ի ծովին ընկղմեայ նաին» ոտանավորից: Միջերկրականում մասախուղը պատել է նավը՝

Եւ ջրասայց ընկղմեցաւ.
 Հինկ, վնց հարիւր հոգիք մեռան
 Քրիստոնէիւք ու այլ ազգա՞:

Տաղի մեջ չկա հույզի ու ապրումի կենդանություն, պատումը անտարբեր-հայնցողակն է, որով անհավանական է դառնում Հ. Ջյուրտյանի վարկածը, թե՛ հեղինակը Մարտիրոս սրկ. կարեցին պիտի լինի, քանի որ «ինքը միակ ակամատեսն էր այդ աղետին»²: Սակայն ակամատեսն իր ապրած սարսափները այդչափ շուտ չէր կարող մոռանալ: Բանասերի այքից վրիպել է մի այլ, առավել ակնհայտ հանգամանք՝ բանակապը, որ հուշում է, թե՛ ո՞վ է հեղինակը. «ի Պրոխորոնե»: Ըստ նրկայթին սա Պրոխորոն Միլիստրեցի վարդապետն է, որ հայտնի է իբրև տաղերի հեղինակ³: Սույն նշանադրությունը հավանական է և այնու, որ հակասություն չկա ժամանակի ատումով:

¹ Տես «Ճառարտ», 1860, տնտրակ Ը:
² «Միոն», 1932, էջ 51:
³ Անդ, էջ 52:
⁴ Տես Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Խ. Դ, Եր., 1948, էջ 271:

Ուղեգրությունն իբրև արևային գրական տնտեսական հայ իրականության մեջ առանձնացավ ու ձևավորվեց ԺԵ դարում միայն և՛ շնորհիվ Մարտիրոս նպաստակարանի, որ հենց նպատակադրվել է քստ հնարավորին նկարագրել իր ուխտագնացությունը՝ ճանապարհը, բնակավայրերը, եկեղեցիները, ազգաբնակչության գեղջ գլխավոր հատկանիշները, սովորույթները...

Ներկա ուղեգրությունն այն նրկերից է, որոնց հեղինակները գրչի մարդ չլինելով, գրում են այնպես, ինչպես խոսում են, որ առավել հետաքրքիր է լեզվի պատմության տնտեսակյունից: Մարտիրոս նպաստակարանը Երզնկացին ծանոթ իմաստով մատնագիր չէ, այլ ճանապարհագր. և դժվար թե ճիշտ կենի Վ. Հակոբյանի ձևակերպումը: «Մարտիրոս Երզնկացու մատնագրական գործերից մեզ հայտնի է միայն երուրտական մի շարք նրկերն են՝ Իտալիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ֆլանդրիա, Ֆրանսիա, Իսպանիա կատարած ճանապարհորդական գրառումները»⁵: Կարելի է ճնշին վերաբառնումով ասել, որ սա նրա միակ նրկն է: «Նեղինակն իրեն չի ներդրում գրական ինչ-որ կաղապարների հարմարվելու համար: Նրա դարձվածքները՝ «Ո՛վ կարող է լեզվով պատմել...» են, հասարակ են դառնում հետագա ուղեգիրների համար ևս, քայց դա միշտ չէ, որ կարելի է շփման ու ազդեցության վերագրել: Պարզապես պատմելու դժվարությունը տնտեսի ու լսածի գարմանալի, սրբանշնի, անսովոր լինելով է պայմանավորված:

Շատ հետաքրքիր դեմք է Մարտիրոս նպաստակարանը, և իզուր չէ, որ նրա կապակցությունը հաճախ հիշում են իր ժամանակի խոշորագույն ճանապարհորդներին: 1489 թ. հոկտեմբերի 29-ին նա ճանապարհ է ընկել դեպի Եվրոպա, և ավելի քան վեց տարի տևած շրջագայությունն ավարտվել է 1496-ի փետրվարի 20-ին: Նա իրեն անվանում է «սպասարտ Ս. Լուսաուրջին Ս. Գերնզամանին»: սա կարելի է համարել միակ ինքնակենսագրական փաստը: Հատկապես նա փառագույն էր տնտեսել Ս. Հակոբի գերնզամանը, որի նկատմամբ անտարբեր չէին հայ հավատացյալները, Եկեղեցին: Ըստ ավանդության Հակոբոս առաքյալի գլուխը թաղված է Երուսաղեմի հայոց նույնանուն վանքում, իսկ մարմինը՝ Իսպանիայում:

Մարտիրոս նպաստակարանի ուղեգրությանն առաջին անգամ ուշադրություն է դարձրել Մեն Մարտենը և թարգմանել Ֆրանսերեն⁶: օգտվելով Փարիզի Ազգային մատենադարանի թ. 65 Ձևագրից, որ 1684 թ. ընդօրինակություն է: Անշուշտ, վերջինիս հրատարակությունն է ձևերի տակ ունեցել պորտուգալերենի թարգմանիչը (Գալանգոս դե Ռիոնյո): Մրանից է արտագրված «Բազմավեպի» հրատարակման հիմք ծառայած վենետիկյան Ձևագիրը⁷: Հաջորդ տպագրությունը Վ. Հակոբյանին է⁸, որն օգտվել է Մաշտոցյան մատենադարանի թ. 3488 Ձևագրից (ժամանակը անհայտ): Վերջինս քննական բնագրի հանգամանքներ ունի, ուստի աշխարհաբար թարգմանելիս գլխավորաբար հիմնվել ենք սրա վրա՝ նկատի ունենալով մշտապես «Բազմավեպը»: Անհրաժեշտության դեպքում տողատակի ծանոթագրություններով նշել ենք բնագրային տարբերությունները: Տեղանունների հարցում գերապատվությունը մեծ մասամբ տվել ենք վենետիկյան հրատարակմանը:

⁵ «Լրագրեր» (ՀԳ), 1957, թ. 6, էջ 97:

⁶ Տե՛ս „Journal Asiatique“, 1826, էջ 321-373:

⁷ Տե՛ս «Բազմավեպ», հա. ՂԵ, 1937, թ. 2-5, էջ 49-60:

⁸ Տե՛ս «Լրագրեր», էջ 97-110: